Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՊԱՀՊԱՆԵՆՔ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼՈՎ

Սույն հոդվածը գրելու համար առիթ հանդիսացավ «Սովետական գրականություն» ամսագրում վերջերս հրատարակված ճարտարապետ Լ. Հովհաննիսյանի ելույթը։ Խոսելով մեր քաղաքի զարգացման պլանների, նախագծված ու նախագծվող շինությունների, սպորտային հրապարակների, ջրավազանների ու զբոսայգիների մասին, ճարտարապետը հասկանալի ոգևորությամբ ավելացնում է. «Կանցնի ոչ ավելի քան երկու տասնամյակ, և հին Երևանի կավաշեն, ցածլիկ տներից ու նեղլիկ, ծուռումուռ փողոցներից հետք անգամ չի մնա»։

Իհարկե, մեր ճարտարապետների այսօրինակ խանդավառությունը միանգամայն բացատրելի է։ Երևանը (և ոչ միայն Երևանը) իրոք որ կավաշեն անցյալ ունի, և դժվար թե այսօր լինի որևէ մեկը, որն առաջարկի այդ ամենից որևէ բան պահպանել ի հիշատակ սերունդների, կամ դարձնել տեսարժան վայր մեզ մոտ հյուր եկող բազում զբոսաշրջիկների համար։ Բայց այս հախուռն մոտեցումը անմիջապես դադարում է և վերածվում է լուրջ մտահոգության, երբ հարցը տեղափոխվում է գիտական հիմքերի վրա, դառնում է, այսպես ասած, գիտական քննարկման նյութ։ Ինչ էլ լինի և ինչպես էլ լինի՝ մենք չենք կարող անտեսել մեր քաղաքի պատմության թեկուզ ամենաանշան բեկորներն ու ամենափոքր նյութական հուշարձանները, եթե չենք կամենում մեր հաջորդների ծաղրին ու հեգնանքին արժանանալ։ Եվ եթե այդ բեկորները ճարտարապետական տեսակետից ճանաչվել են անարժեք, հետևաբար պահպանվելու համար անպետք, ապա նրանք անպայմանորեն պետք է պահպանվեն լուսանկարման միջոցով։ Այդպես է արվում բոլոր խոշոր քաղաքներում, ուր քանդվելու «դատապարտված» այս կամ այն հնությունը նախապես մի քանի տարբեր ձևերով լուսանկարվում է մասնագետ նկարիչների կողմից և նոր միայն հանձնվում է քանդման։ Սակայն, ցավոք սրտի, պետք է արձանագրենք, որ ամենևին էլ այդպես չի արվում մեզ մոտ՝ Հայաստանում, և առավել ևս, դա չի արվում մեր քաղաքի կապակցությամբ։ Հետևանքն այն է եղել, որ Երևանի պատմության կարևորագույն օղակները հանդիսացող շատ հնություններ ընդմիշտ «անհետացել» են և նրանց մասին մենք այսօր կարող ենք միայն վերացական դատողություններ անել։

Խոսենք փաստերով։

Այժմյան «Մոսկվա» կինոթատրոնի տեղում գտնվում էր հռչակավոր Պողոս-Պետրոս եկեղեցին, իսկ ավելի ներքև՝ ներկայիս Շահումյանի արձանի և համանուն հրապարակի տեղում

գտնվում էր ոչ պակաս նշանավոր Ռուսաց եկեղեցին։ Սրանից դեպի արևմուտք, այնտեղ, ուր հիմա կառուցված է Չարենցի անվան դպրոցը, գտնվում էր Սուրբ Լուսավորիչը։ Հնություններ էին սրանք, որոնց մասին միշտ էլ դրվատանքով էին խոսում Երևան այցելած ճանապարհորդները, հայկական ճարտարապետության մասնագետները։ Եվ այս ճարտարապետական կոթողներից միայն մեկի՝ Պողոս-Պետրոս եկեղեցու լուսանկարն ունենք, այն էլ մեկը, և, ի դեպ, անհաջողը, իսկ մյուսներից՝ և ոչ մեկինը։

Ոչ պակաս հետաքրքրական էին «Սարդարի բերդի» պահպանված բեկորները Օրջոնիկիձեի պողոտայի վրա և Զանգվի ձորի ափին։ Սակայն դրանք էլ ժամանակին չեն լուսանկարվել, և այսօր, պատմական ու սարսափազդու «Սարդարի բերդից» ոչինչ չի մնացել։ Չենք խոսում դեպի բերդը բերող և բերդից դուրս տանող ներքնուղիների մասին, որոնք մինչև այսօր էլ անհայտ են մնացել ուսումնասիրողների համար։

Ոչ ոք ժամանակին չմտածեց լուսանկարել Երևանի հին բաղնիքը, որը 1860-ական թվականների շինություն էր, և անպայման ուշադրության արժանի, Երևանի հին ջրամբարը՝ Ղուկաս Ղուկասյանի այգու կողքին, Բեթղեհեմ մատուռը՝ Օպերայի և բալետի պետական թատրոնի շենքի տեղում, Երևանի միակ իջևանատունը՝ Գյուրջի քարվանսարան՝ Լենինյան և Մարքսի պողոտաների հատման տեղում, Աֆրիկյանների՝ 1884 թվականին կառուցված մենատունը՝ Գնունի և Թումանյան փողոցների հատման տեղում, ռուսական բանակի երկու զորանոցները, որոնք հայտնի «Ռուսաց կազարմա» անունով, կառուցված 1896 և 1899 թվականներին՝ Թումանյան փողոցի վերջում, և այլն, և այլն։ Իսկ այս ամենի մասին ժամանակին չմտածելու տխուր հետևանքն այն եղավ, որ այդ և նման հուշարձանները, որոնք անշուշտ կարևոր կլինեին մեր քաղաքի պատմության համար, արդեն ընդմիշտ կորած անցյալ են դարձել մեզ համար։

Նորից ենք կամենում կրկնել, որ այս ամենը չենք ասում նշված կարգի հնությունները պահպանելու համար, որովհետև վերջիններս իրոք որ ամենահամեստ քննության անգամ չէին կարող դիմանալ։ Բայց որ այդ ամենը անհրաժեշտ էր լուսանկարել և խնամքով պահպանել որպես քաղաքի պատմություն, այս մասին հազիվ թե լինի մեկը, որ վիճի մեզ հետ։

Վերջերս Երևանի 2750-ամյակի տոնակատարության կապակցությամբ ստեղծվել է Երևանի պատմության հարցերով զբաղվող խորհուրդ։ Կարծում եմ՝ նրան էլ պետք է հանձնարարել հնարավորինս շուտափույթ նկարահանելու մեր քաղաքի՝ դեռևս մնացած

հուշարձանները, որպեսզի մի անգամ ևս տեղին հնչի ֆրանսիացի պատմաբան Միշլեի հանրահայտ խոսքերը. «Մենք իրավունք չունենք աղավաղելու պատմությունը, եթե չենք կամենում ծիծաղի առարկա դառնալ հենց այդ պատմության կողմից»։

Երեկոյան Երևան, 1968 թ., № 72, մարտի 26